ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հոկտեմբերի 2025թ. թիվ 634-Ա

Ա.ԱՊՐԵՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 3-րդ մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի և Ա.Ապրեսյանի միջև 22.09.2025թ. կնքված ժամկետային աշխատանքային պայմանագրի 7-րդ կետը և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 627-Ա որոշումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Անուշ Ավետիքի Ապրեսյանին 2025 թվականի հոկտեմբերի 21-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Արևածագի Կարո Մելիքսեթյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից և լուծել նրա հետ 2025թ. սեպտեմբերի 22-ին կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2. Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով կամ առձեռն ծանուցել հասցեատիրոջը:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 21
ք.Վանաձոր